ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» «06» 2013 թվականի N: 198-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի N 624 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգի» 14-րդ կետի «ե» ենթակետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու մասին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի մայիսի 13-ի N 114-Ա որոշման 1-ին կետով ստեղծված հանձնաժողովի կողմից քաղաքաշինության բնագավառում Ախուրյանի համայնքի ղեկավարի գործունեության պլանային ստուգման արդյունքում կազմված 2013 թվականի մայիսի 29-ի արձանագրությունը (համաձայն հավելվածի).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի ղեկավարին առաջարկել՝

ապահովել «Քաղաքաշինություն» ՍՆԻՊ 2.07.01-89-ի N 1 հավելվածի և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2006թ. օգոստոսի 21-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, օգտագործման և կառուցապատման տրամադրելու պայմանագրերի հավելված հանդիսացող հողամասի հատակագծի օրինակելի ձևը սահմանելու մասին» N06-339-Ն հրամանի N 1 հավելվածի պահանջների կատարումը:

2. Ձեռնարկված միջոցների մասին 10-օրյա ժամկետում տեղյակ պահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է